ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» դեկտեմբերի** 2017թ. **N --- -Ա**

## ՈՐՈՇՈՒՄ
## «ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հավանություն տալ Երևան քաղաքի 2800-ամյակին նվիրված՝ «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի՝ Երևան քաղաքի Ա.Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ.Լուսավորչի փողոցների սահմաններով պարփակված այգու բարեկարգման նպատակով իրականացվելիք շինարարական, այդ թվում՝ շատրվանների կառուցման աշխատանքների արդյունքը Երևան համայնքին նվիրաբերելու առաջարկին:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր՝ հետևյալ հիմնական պայմանների ներառմամբ.

1) Նվիրաբերությունն իրականացվում է որպես բարեգործություն, նվիրաբերության նպատակն է՝ Երևան քաղաքի 2800-ամյակին նվիրված բարեկարգ այգին (այսուհետ՝ Այգի) բացառապես հանրության հանգստի համար ծառայեցնելը.

2) Այգին առնվազն 99 տարի պետք է հանդիսանա համայնքի սեփականությունը և ծառայի նվիրաբերության պայմանագրով նախատեսված նվիրաբերության նպատակին.

3) շինարարական և բարեկարգման աշխատանքները «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պարտավորվում է իրականացնել մինչև 2018 թվականի սեպտեմբերի 25-ը, իսկ Երևան համայնքը պարտավորվում է ընդունել դրանք՝ նվիրաբերության պայմանագրին համապատասխան.

4) շինարարական և բարեկարգման աշխատանքները, ներառյալ՝ նախագծման աշխատանքները, իրականացվում են «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի հաշվին՝ վերջինիս ընտրած կապալառուների միջոցով.

5) «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պարտավորվում է.

ա. Երևան համայնքին հանձնել Այգու ճարտարապետակոնստրուկտորական նախագծերը և ինժեներական ցանցերի սխեման:

բ. իր միջոցների հաշվին իրականացնել այգու շատրվանների ինժեներական և տեխնիկական սպասարկումը, սարք-սարքավորումների խոտանման դեպքում՝ դրանց վերականգնումը և/կամ փոխարինումը նորով, վնասված սալերի փոխարինումը և/կամ վերանորոգումը, ինչպես նաև կանաչ գոտիների խնամքն ու սպասարկումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# ««ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիմելով Երևանի քաղաքապետարան «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պատրաստակամություն է հայտնել Երևան քաղաքի 2800 ամյակի կապակցությամբ Երևան քաղաքին՝ հանրօգուտ նպատակներով, կատարել նվիրաբերություն:

Այն կիրականացվի Երևան քաղաքի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններով պարփակված այգում իրականացվելիք շինարարական և բարեկարգման աշխատանքների արդյունքը Երևան քաղաքին նվիրաբերելու ձևով:

Բացի այգու հիմնանորոգման աշխատանքներից, «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պատրաստակամություն է հայտնել, որպես պայմանագրային պարտավորություն ստանձնել հետևյալ պարտավորությունները.

իր միջոցների հաշվին իրականացնել այգու շատրվանների ինժեներական և տեխնիկական սպասարկումը, սարք-սարքավորումների խոտանման դեպքում՝ դրանց վերականգնումը և/կամ փոխարինումը նորով, վնասված սալերի փոխարինումը և/կամ վերանորոգումը, ինչպես նաև կանաչ գոտիների խնամքն ու սպասարկումը:

Երևան համայնքի համաձայնությամբ՝ Այգու ամբողջ տարածքում իրականացնել շուրջօրյա տեսավերահսկում և այլն:

Պայմանագրով նախատեսվում է սահմանել Երևան համայնքի հետևյալ պարտավորությունները.

իր միջոցների հաշվին իրականացնել այգու, ներառյալ շինարարական և բարեկարգման աշխատանքների արդյունքի պահպանությունը.

վճարել այգում օգտագործված ոռոգման և խմելու՝ ներառյալ շատրվանների ջրի դիմաց վճարները, այգու սպասարկման, լուսավորության համար ծախսված էլ. էներգիայի վճարները, ինչպես նաև այգու աղբահանության և մաքրության համար անհրաժեշտ վճարներն ամբողջ տարվա ընթացքում.

ապահովել Այգում շատրվանների աշխատանքը և այլն:

Կնքվող նվիրաբերության պայմանագրի ժամկետի ավարտին Երևան համայնքը կունենա հիմնանորոգված և բարեկարգ այգի, որը մեծ նվեր կլինի Երևանի բնակիչների և մայրաքաղաքի հյուրերի համար՝ Երևանի 2800-ամյակի տոնին ընդառաջ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ««ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ««ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ